ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԹԱՆԳԱՐԱՆ

Հայաստանի
Հանրապետության
մշակույթի նախարարություն

МУЗЕЙ ОВАНЕСА ТУМАНЯНА
Министерство культуры
Республики Армения

**MUSEUM OF HOVANESS TOUMANIAN**
**Ministry of Culture**
**of the Republic of Armenia**

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մոսկովյան 40, հեռ. 51-60-21, 56-00-21
Республика Армения, г. Ереван, ул. Московян 40, тел. 51-60-21, 56-00-21
Moskovian Str. 40, Yerevan, Republic of Armenia, tel: 51-60-21, 56-00-21

*0-12-33*
*27.05.14թ.*

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
carayutyun-11-2@shh.gnumner.am

Հարգելի մասնակից

N <<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ -ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու “Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՀԹԹ-ՇՀԾՁԲ-14/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Մոսկովյան 40 հասցեով մինչև 2014թ-ի հունիսի 10-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար ՝ Հ. Դերմենջյանը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: :

Հայտերը կբացվեն <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում՝ ք. Երևան Մոսկովյան 40 հասցեում՝ հունիսի 10-ը, ժամը 11:00-ն: Գնման առարկա է հանդիսանում՝ <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ -ի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված 2)։ Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՆԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով։

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը։

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ։

<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ museum@toumanian.am ։

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը։ Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները։

<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ն. Խաչատուրյան

Հեռ.՝ 010566021